Առաջարկություններ

1. Ինտեգրել ագրոէկոհամակարգերը բնության հատուկ պահպանվող տարածքների պլանավորման մեջ

2. Ներդնել բնության հատուկ պահպանվող տարածքներին հարակից համայնքներում դիվերսիֆիկացված և շրջակա միջավայրի պահպանությանը նպաստող գյուղատնտեսական համակարգեր՝ էկոհամակարգերի վրա ճնշումը նվազեցնելու և պարենային անվտանգությունը բարձրացնելու համար

3. Աջակցել բնության հատուկ պահպանվող տարածքներին հարակից համայնքներում ագրոէկոլոգիական և կայուն գյուղատնտեսական գործելակերպերի ներդրմանն ու տարածմանը՝ ներառյալ մշակաբույսերի և դրանց սորտերի դիվերսիֆիկացիան, հողի բերրիության պահպանությունն ու վերականգնումը և վնասակար օրգանիզմների դեմ ինտեգրացված պայքարի (ՎԴԻՊ) մեթոդները

4. Խթանել բնության հատուկ պահպանվող տարածքներին հարակից համայնքներում գործող արտադրողների էկոլոգիապես մաքուր գյուղատնտեսական արտադրանքի շուկայահանումը՝ աջակցելով բրենդավորմանը և արժեքային շղթաների զարգացմանը

5. Ապահովել ավանդական և տեղական գյուղատնտեսական գիտելիքների, այդ թվում՝ սերմերի և կենդանիների տեղական ցեղատեսակների բազմազանությանը վերաբերող գիտելիքների փաստաթղթավորումն ու ներառումը կենսաբազմազանության պահպանության նպատակներում

6. Ընդլայնել հետազոտական և փորձնական ծրագրերն՝ ուսումնասիրելու ագրոէկոլոգիական մոտեցումների դերը էկոհամակարգային ծառայությունների ապահովման գործում

7. Աստիճանաբար նվազեցնել բարձր վտանգավորության թունաքիմիկատների (ԲՎԹ-ներ/HHPs), ներառյալ պերֆտորալկիլային միացությունների (ՊՖԱՄ-ներ/PFASs) օգտագործումն՝ անցում կատարելով կենսաբանական պայքարի միջոցով իրականացվող միջոցառումներին

8. Աջակցել ավանդական գյուղատնտեսական համակարգերի պահպանմանն ու շարունակական կիրառմանը՝ ներառյալ հացահատիկային, խաղողի և լոբազգիների տեղական հինավուրց սորտերը, ավանդական այգեգործական համակարգերը և արոտավայրային էքստենսիվ անասնապահությունը՝ որպես մարդու և բնության փոխազդեցությամբ ձևավորված պահպանվող լանդշաֆտների կարևոր բաղադրիչ

Գործնական միջոցառումներ՝

- համայնքային սերմերի բանկեր,
- ֆերմերներին պետական աջակցություն,

- կայուն գյուղատնտեսության զարգացում,
- ֆերմերների ուսուցում պատշաճ գյուղատնտեսական գործելակերպի կանոնների վերաբերյալ և ագրոտեխնիկական աշխատանքների վերաբերյալ իրազեկվածության մակարդակի բարձրացում,
- բնության հատուկ պահպանվող տարածքներին հարակից համայնքներից ստացված արտադրանքի հավաստագրում:

9. Բնության հատուկ պահպանվող տարածքներին հարակից համայնքներում իրականացնել մշակովի բույսերի վայրի ազգակիցների պահպանություն (ցորենի վայրի տեսակներ, խաղող, պտղատու մշակաբույսեր, դեղաբույսեր)

10. Առաջարկել պարտադիր գենդերային քվոտաներ՝

ա) բնության հատուկ պահպանվող տարածքների կառավարող խորհուրդներում,
բ) խորհրդատվական խորհուրդներում:

11. Ներդնել գենդերային հավասարության ապահովման արդյունավետության ցուցանիշներ, որոնք կապված են ԿԱՌԳԾ-ի (NBSAP) իրականացման փուլերի հետ

12. Պետական և տեղական մակարդակներում մշակվող բնապահպանական և գյուղատնտեսական ծրագրերում ներառել գենդերային հավասարության սկզբունքներ՝ ապահովելով կանանց և տղամարդկանց հավասար մասնակցությունը որոշումների կայացման գործընթացներում

13. Մշակել սեռով տարանջատված տվյալների հավաքագրման համակարգեր, որոնք հնարավորություն կտան գնահատելու կանանց և տղամարդկանց մասնակցությունն ու ազդեցությունը կենսաբազմազանության պահպանության գործընթացներում

14. Բնության հատուկ պահպանվող տարածքների աշխատակիցների (օրինակ՝ անտառապահներ, պարկերի խորհուրդներ) և տեղական ինքնակառավարման մարմինների համար ապահովել գենդերային հավասարության վերաբերյալ վերապատրաստում՝ բնապահպանության ոլորտում ներառական առաջնորդությունը բարելավելու համար

15. Գյուղաբնակ կանանց համար կազմակերպել վերապատրաստումներ կայուն գյուղատնտեսության, ագրոկենսաբազմազանության պահպանության, բնական պաշարների կառավարման և էկոտուրիզմի ոլորտներում

16. Գյուղաբնակ կանանց համար իրականացնել առաջնորդության, բանակցությունների և կայուն բիզնեսի պլանավորման դասընթացներ՝ բնական պաշարների կառավարման գործում նրանց դերը բարձրացնելու նպատակով

17. Աջակցել կանանց ձեռնարկատիրական նախաձեռնություններին, տեղական արտադրությանը և էկոլոգիապես կայուն գյուղատնտեսական գործունեությանը՝ տրամադրելով դրամաշնորհներ, վարկային աջակցություն և շուկաների հասանելիություն

18. Ճանաչել և խրախուսել գյուղաբնակ կանանց դերն ավանդական սերմերի պահպանման, տեղական մշակաբույսերի բազմազանության և բնապահպանական գիտելիքների փոխանցման գործում

19. Ուժեղացնել մշտադիտարկումը, գիտելիքների և համայնքների ներգրավվածությունը՝ ուշադրության կենտրոնում պահելով կանանց

20. Իրականացնել համայնքային ֆինանսավորման մեխանիզմների ուսումնասիրություն (օրինակ, շրջանառու ֆոնդեր՝ բնության հատուկ պահպանվող տարածքների շրջակայքում կանանց էկո-ձեռներեցության համար)

21. Ընդլայնել շահագրգիռ կողմերի ներգրավվածությունը և համագործակցության հարթակները

22. Ընդլայնել Հայաստանի համագործակցությունը միջազգային կազմակերպությունների և դոնոր կառույցների հետ՝ գենդերային հավասարության և կենսաբազմազանության պահպանության համատեղ ծրագրեր իրականացնելու նպատակով